Եղիշե Չարենց

Երազում եմ այն Երկիրը հեռավոր...

Երազում եմ այն Երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեգ մարմինը ու հոգին՝
Աննյութացա՛ծ ու նյութացա՛ծ, լուսավոր՝
Ողջակիզվեն Արևի մեջ, քույր իմ, կին:

Ու միանա՛ն սեգ մարմի՛նը ու հոգի՛ն...
Ու չլինի՛, ու չլինի՛ դու ու ես:
Աննյութացած դու մարմնանաս ու կրկին
Հրա՛շք դառնաս՝ անդունդները արևես...

Եվ երբ կանչեմ դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքի՛ց, տառապանքի՛ց շիկացած
Գրկես թևե՛րս մանկական ու անբիծ
Ախ, կի՛ն ցնորք, քո՛ւյր, Շամիրամ ու Աստվա՛ծ:

1913 1916